

քաղաքը, եւ միայն Հայերու կողմէ իրենց վճարուած տուրքի մը փոխարէն ազատ կը ձգէին պարէնի մուտքը : Խնամակալներն ամիրաներէ ի վեր դաշնակցած էին այս երկու բէկերու հետ , եւ կանոնաւոր տուրք մը կը վճարէին . ուստի Լեւոն ալ ուղեց մի եւ նոյն պայմաններով դաշնակցել անոնց հետ : Բայց « չէյթան »-ը հոն էր . մէկ կողմէ Լեւոնի հակառակորդները համոզեցին Դաւութ բէկը , որ Լեւոն կեղծ է եւ մտադիր է յարձակիլ բէկին վրայ , իսկ միւս կողմէ Լեւոնը գրգռեցին Դաւութի դէմ :

Պատերազմն սկսաւ :

Քաղաքին բնակիչները զրկուեցան ուտելիքէ , եւ սկսան գիշերային յարձակումներով պաշար կրել դրսէն :

Այս վիճակն երեք ամիս տեւեց . եւ զօրաւոր միջամտութիւններով ու բարեխօսութիւններով հազիւ ետ քաշուեցաւ Դաւութ բէկ՝ հրամայելով որ Հայերը նորէն առաջուան պէս ազատ փոխադրեն իրենց ուտելիքը , որոշուած տուրքը վճարելէ ետքը :

Հակառակորդներու գործին չէր դար այս հաշտութիւնը : Կրօնական մոլութիւնն այն աստիճան թուլցուցած ու կուրցուցած էր Հայերու ազգային զգացումը , որ « կաթոլիկ » թագաւորի մը իշխանութենէն ազատուելու համար նախապատիւ համարեցին մտնել Եգիպտոսի սուլտանին տիրապետութեան տակ . ուստի գաղտնի նամակներով խորհուրդ տուին սուլտանին սիրելի հաւատաւոր Սչոտ իշխանին , — որ Կոստանդին Դ-ի աներձագն էր եւ թագաւորին սպանութենէն ետքը փախած հաստատուած էր Եգիպտոս , ուրանալով նաեւ իրեն լոյս հաւատքը , — որպէս զի Եգիպտական զօրքերով դայ գրաւէ Հայաստանն եւ ինքն ալ թագաւոր ըլլայ Հայոց :

Հայաստանի բախտն հաստատապէս վճռուած էր այլ եւս . . .

Եգիպտոսի սուլտանը , Մէլիք էլ-Աշրաֆ-Չէյն-է-դզին-Աբուլ՝ Մէալի Շաբան իբն Հուսէյն (1363-1377) , ուրացող Աշոտի խորհրդով իր քովը կանչել տուաւ Դաւութ բէկի զինակից Աբուբէքրը , եւ հրամայեց երթալ գրաւել Սիսը :

1375 թ. յունվար 5-ին Աբուբէքր 15,000 զօրքով Սսի առջեւ բանակած կսպասէր զիշերուան մթութեան : Երբ զիշերը վրայ հասաւ , սկսաւ զօրաւոր յարձակումներով քանդել՝ աւերել քաղաքին տկար մասը , եւ գերել կոտորել անմեղ բնակիչները :

Ազգայնականները տեսնելով Աբուբէքրի գալը՝ Լեւոնէն գաղտնի ժողով գումարեցին կաթողիկոսին քովը , եւ ներկայ դանուողներու ստորագրութեան տակ թուղթ մը պատրաստելով զրկեցին Հալէբի կուսակալ Մէրզինցի Սէյֆ-է-դզին Ընդլիթիմուր էն-Նասրի ամիրային , որպէս զի յանուն